



Կարևոր տեղեկություններ Տնային աջակցության ծառայություններ (In-Home Supportive Services, IHSS) մատակարարողի համար

Նահանգային օրենքում վերջերս տեղի ունեցած փոփոխությունն ազդում է IHSS ստացողների ու մատակարարողների վրա: (Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի մասեր 12300.4, 12300.41 և 12301.1)

Ստացողի հաստատված ժամերի թույլտվությունը չի փոխվելու, ու ձեր ստացող(ներ)ը շարունակելու է ստանալ ամսական հաստատված ծառայության նույն ժամերի քանակը, որոնք ինքը հիմա է ստանում: Ձեր ստացող(ներ)ը կշարունակի աշխատել ձեզ հետ՝ համոզվելու համար, որ նա ստանում է իրեն անհրաժեշտ բոլոր ծառայությունները ողջ ամսվա ընթացքում:

ԵՐԲ ԵՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2016 թ. փետրվարի 1-ից:

ԻՆՉ Է ՓՈԽՎԵԼ

Այս օրենքն ասում է, որ IHSS մատակարարողները վճարվելու են արտաժամյա աշխատանքի համար՝ որոշ սահմանափակումներով, ու վճարվելու են ստացողից դեպի ստացող իրենց ճամփորդության ժամանակի համար՝ որոշ սահմանափակումներով:

1. Աշխատանքային շաբաթում թույլատրելի աշխատանքային ժամերի քանակի սահմանափակում (առավելագույն շաբաթական ժամեր)

Սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ յուրաքանչյուր IHSS ստացողի ամսական հաստատված ժամերը բաժանվելու են 4-ի՝ որոշելու համար իրենց առավելագույն շաբաթական ժամերը: Առավելագույն շաբաթական ժամաքանակը մի ուղեցույց է, որը տեղեկացնում է ձեզ առավելագույն ժամաքանակի մասին, որը կարող էք աշխատել մեկ աշխատաֆային շաբաթում, որպեսզի ձեր ստացողը կարողանա հաշվարկել իր ծառայության ժամերը մեկ ամսում՝ համոզվելու համար, որ նա ստանում է իր ամսական ծառայության բոլոր ժամերը:

Եվ դուք, և ձեր ստացողը ծանուցագիր կստանաք՝ տեղեկացնելով ձեզ, թե որքան հաստատված ծառայության ժամեր է նա ստանում ամեն ամիս ու ամեն շաբաթ: Այնուամենայնիվ, ձեր ստացողը կարող է փոփոխել իր առավելագույն շաբաթական ժամերը որոշ դեպքերում: Տեսեք ԺԱՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ հատվածը:

- Եթե դուք աշխատում եք միայն մեկ ստացողի համար, ապա առավելագույն ժամաքանակը, որը կարող եք հայցել մեկ աշխատանքային շաբաթում, կազմում է ձեր ստացողի ամսական հաստատված ժամերը՝ բաժանված 4-ի:
 - o Օրինակ 1. յուրաքանչյուր ամիս ձեր ստացողն ունի ամսական հաստատված 100 ժամ: Առավելագույն շաբաթական ժամերը, որոնք կարող եք աշխատել ձեր ստացողի համար, կազմում են 25 ժամ, այսինքն՝ 100 ամսական հաստատված ժամը՝ բաժանված 4-ի:

Սակայն, քանի որ ամիսների մեծ մասը 4 շաբաթից մի քիչ ավել է, դուք պետք է համագործակցեք ձեր ստացողի հետ, որպեսզի բաշխենք իր ժամերն ամբողջ ամսվա ընթացքում՝ համոզվելու համար, որ նա ծառայության բավական ժամեր ունի ամսվա վերջում:

- o *Դեկտեմբեր ամիսն ունի 31 օր: Ձեր ստացողն ունի ամսական հաստատված 100 ժամ: Առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 25 ժամ (100 ամսական հաստատված ժամը՝ բաժանված 4.0-ի): Սակայն քանի որ դեկտեմբերն իրականում բաղկացած է 4 ու կես շաբաթից, ձեր ստացողը պետք է որոշի, թե որքան ժամեր է ցանկանում պահել առաջին չորս շաբաթից, որպեսզի բավական ժամեր ունենա ամսվա վերջին մի քանի օրերի համար: Ձեր ստացողը կարող է, օրինակ, խնդրել, որ դուք աշխատեք շաբաթական 22 ժամ առաջին չորս շաբաթվա ընթացքում, ինչի հետևանքով նրան կմնա 12 հաստատված ծառայության ժամ ամսվա վերջին օրերի համար (22 ժամ բազմապատկած 4-ի՝ հավասար է 88 ժամ. 88 ժամին գումարած 12 ժամ՝ հավասար է 100 ժամ):*
- **Եթե դուք աշխատում եք մեկ ստացողի համար, և այդ ստացողն ունի այլ մատակարարողներ, ապա ձեր ստացողը պետք է ձեզ ու այլ մատակարարողների համար ժամանակացույց ստեղծի՝ որոշելու համար, որքան ժամ է ձեզանից յուրաքանչյուրն աշխատելու: Ձեր ստացողը պետք է բաժանի իր ընդհանուր հաստատված ժամերն իր մատակարարողների միջև այնպես, ինչպես ինքը նպատակահարմար է գտնում:**
- **Եթե դուք աշխատում եք մեկից ավել ստացողների համար, ապա աշխատանքային շաբաթում ձեր հայցված առավելագույն ժամաբանակը միասնաբար բոլոր ստացողների համար ձեր աշխատած ժամանակի համար պետք է կազմի 66 ժամ: **Ձեր ստացողներից յուրաքանչյուրը պետք է ձեզ համար ժամանակացույց կազմի՝ որոշելու համար, թե քանի ժամ եք դուք աշխատելու նրանցից յուրաքանչյուրի համար, որպեսզի դուք համոզվեք, որ չեք աշխատում շաբաթական 66 ժամից ավել:****
- o *Օրինակ 2. դուք աշխատում եք երկու ստացողների համար, որոնցից յուրաքանչյուրն ունի ամսական հաստատված 100 ժամ: Յուրաքանչյուր ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 25 ժամ (100 ժամը՝ բաժանված 4-ի) և միասնական ընդհանուրը կազմում է 50 ժամ (25 ժամ առաջին ստացողի համար՝ գումարած 25 ժամ երկրորդ ստացողի համար): Դուք կկարողանաք աշխատել երկու ստացողների համար, քանի որ միասնական ընդհանուրը չի գերազանցում 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:*
- o *Օրինակ 3. դուք աշխատում եք երկու ստացողների համար: Առաջին ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 25 ժամ: Երկրորդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 50 ժամ: Երկու ստացողների համար միասնաբար ընդհանուր առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 75 ժամ: Սակայն, որպես մատակարարող, որն աշխատում է մեկից ավելի ստացողների համար, դուք չեք կարող աշխատել 66 ժամից ավել: Դուք պետք է տեղեկացնեք ձեր ստացողներին, որ չեք կարող աշխատել 75 ժամ, ու պետք է համագործակցեք նրանցից մեկի կամ երկուսի հետ՝ մշակելու համար այնպիսի աշխատանքային գրաֆիկ, որը ձեզ թույլ չի տալիս աշխատել 66 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում: Կախված աշխատանքային գրաֆիկից՝ ստացողներից մեկը կամ երկուսն էլ պետք է օգտվեն կամ վարձեն մեկ այլ մատակարարող, որը կարող է աշխատել այդ լրացուցիչ ինը ժամը մեկ աշխատանքային շաբաթում:*

2. Վճարում արտաժամյա աշխատանքի համար

Դուք կստանաք արտաժամյա դրույթաչափով վճարում, երբ աշխատում եք 40 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում: Արտաժամյա վճարման դրույթաչափը սովորական վճարման դրույթաչափի մեկ ու կեսն է:

Օրինակ, եթե դուք վաստակում եք \$10 մեկ ժամում, ու դուք աշխատում եք 45 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, ապա դուք վճարվելու եք \$10 մեկ ժամում առաջին 40 ժամվա համար ($40 \times \$10 = \400), և \$15 ($1.5 \times \$10 = \15) մեկ ժամում հինգ ժամվա համար, որոնք գերազանցում են ձեր աշխատած 40 ժամը մեկ աշխատանքային շաբաթում ($5 \times \$15 = \75), և ընդհանուր գումարը կկազմի \$475:

Աշխատանքային շաբաթը սկսում է կեսգիշերից (12:00 a.m.) կիրակի օրն ու ավարտվում է մինչև կեսգիշերը (11:59 p.m.) հաջորդ շաբաթ օրը:

3. Վճարում ճամփորդության ժամանակի համար

Սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ եթե դուք աշխատում եք մեկից ավել ստացողների համար տարբեր վայրերում նույն օրը, դուք իրավասու եք վճարվել երկու ստացողների միջև ճամփորդության համար՝ մինչև յոթ ժամ մեկ աշխատանքային շաբաթում:

Ճամփորդության ժամանակի վճարումը ծածկում է այն ժամանակը, որն անհրաժեշտ է ուղղակիորեն ծառայությունների մեկ ստացողից դեպի ծառայությունների մյուս ստացողը ճամփորդելու համար նույն օրվա ընթացքում: Ճամփորդության ժամանակը չի ներառում ձեզ անհրաժեշտ ժամանակը ձեր տնից մինչև ծառայություններ ստացողն ու աշխատանքից հետո տուն վերադառնալու համար:

Դուք վճարվելու եք ճամփորդության ժամանակի համար՝ անկախ ճամփորդության միջոցից (մեքենայով, հանրային տրանսպորտով, ոտքով, հեծանիվով):

Դուք պետք է գրանցեք ձեր ճամփորդության ժամանակը յուրաքանչյուր շաբաթ, որպեսզի կարողանաք գեկուցել այն ձեր ճամփորդության հայցի ձևի վրա, որը կստանաք վարչաշրջանի IHSS գրասենյակից: **Երկու ստացողների միջև ճամփորդության ժամանակը չի հաշվարկվում որպես ձեր առավելագույն շաբաթական 66 ժամվա մաս, և չի հանվում ստացողի ամսական հաստատված ժամերից:**

Վարչաշրջանների միջև ճամփորդության ժամանակի համար վճարում

Հաշվարկելու համար ձեր վճարման դրույթաչափը, երբ ճամփորդում եք մեկ վարչաշրջանում գտնվող ստացողից դեպի մեկ այլ վարչաշրջանում գտնվող ստացողը, դուք պետք է ձեր ճամփորդության հայցի ձևում նշեք, թե որ ստացողի մոտ եք գնում, քանի որ վճարման դրույթաչափը ճամփորդության համար որոշվում է վերջնակետ վարչաշրջանի հիման վրա:

Ճամփորդության ժամանակի սահմանափակումներ

Ճամփորդության համար մատակարարողներին թույլատրելի հայցվող առավելագույն ժամանակը կազմում է 7 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:

- Եթե ձեր ճամփորդության ժամանակը մեկ աշխատանքային շաբաթում գերազանցելու է 7 ժամը, դուք պետք է վերանայեք ձեր աշխատանքային ժամերը ձեր ստացողների հետ, որպեսզի ձեր հայցվող ճամփորդության ժամանակը մեկ աշխատանքային շաբաթում չգերազանցի 7 ժամը:
- Եթե դուք ճամփորդության հայցի ձև եք ներկայացնում՝ հայցելով աշխատանքային շաբաթում 7 ժամից ավել ճամփորդության ժամանակ, ապա դուք կվճարվեք հայցված ժամանակի համար, սակայն դուք խախտում կստանաք:

ԺԱՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստացողը կարող է փոփոխել ժամերը՝ թույլ տալով մատակարարողին աշխատել սովորական առավելագույն շաբաթական ժամերից ավել:

Միայն մեկ ստացողի համար աշխատող մատակարարողների համար (եթե այլ մատակարարող չկա) – ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել աշխատելը

Ձեր ստացողը կարող է ինդրել ձեզ աշխատել իր առավելագույն շաբաթական ժամերից ավել: Այդ դեպքում դուք պետք է համոզվեք, որ այդ լրացուցիչ ժամերի հաշվին ավելի քիչ ժամ եք աշխատելու ամսվա մեկ այլ շաբաթվա ընթացքում, որպեսզի չգերազանցեք ձեր ստացողի ամսական հաստատված ժամերը:

Ձեր ստացողը կարող է թույլատրել ձեզ աշխատել իր շաբաթական հաստատված ժամերից ավել, առանց վարչաշրջանից հավանություն խնդրելու, եթե այդ թույլտվության հետևանքով դուք չեք աշխատում՝

- Ավել արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան սովորաբար աշխատում եք.

Օրինակ. ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 45 ժամ աշխատանքային շաբաթում: Այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում ձեր ստացողին հարկավոր է, որ դուք աշխատեք 55 ժամ: Նա ասում է, որ նա կնվազեցնի ձեր աշխատանքային ժամերը 10 ժամով հաջորդ շաբաթ, որպեսզի դուք աշխատեք միայն 35 ժամ այդ շաբաթ:

Այս փոփոխության պատճառով դուք աշխատելու եք 15 արտաժամյա ժամ երկու շաբաթվա ժամանակահատվածում՝ 10 արտաժամյա ժամվա փոխարեն, որոնք սովորաբար կաշխատեիք: Քանի որ այս փոփոխությունը պատճառով դուք աշխատելու եք լրացուցիչ հինգ արտաժամյա ժամ մեկ ամսում, ձեր ստացողը պետք է վարչաշրջանից հավանություն ստանա ձեր աշխատանքային գրաֆիկի այս փոփոխության համար:

- 40 ժամից ավել ձեր ստացողի համար մեկ աշխատանքային շաբաթում, եթե նրա առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ մեկ աշխատանքային շաբաթում:

Օրինակ. ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ աշխատանքային շաբաթում: Այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում ձեր ստացողին հարկավոր է, որ դուք աշխատեք 42 ժամ՝ իր առավելագույն շաբաթական ժամերից երկու ժամ ավել: Ձեր ստացողը պետք է վարչաշրջանից հավանություն ստանա այս փոփոխության համար:

Մեկից ավել ստացողների համար աշխատող մատակարարողների համար – ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել աշխատելու

Ձեր ստացողներից մեկը կարող է թույլատրել ձեզ աշխատել իր շաբաթական հաստատված ժամերից ավել, առանց վարչաշրջանից հավանություն խնդրելու, եթե այդ թույլտվության հետևանքով դուք չեք աշխատում՝

- 40 ժամից ավել ձեր ստացողի համար մեկ աշխատանքային շաբաթում, եթե նրա առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ մեկ աշխատանքային շաբաթում:

Օրինակ. դուք աշխատում եք 40 ժամ մեկ աշխատանքային շաբաթում ձեր ստացողներից մեկի համար, ում առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ աշխատանքային շաբաթում: Այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում այդ ստացողին հարկավոր է, որ դուք աշխատեք 42 ժամ՝ իր առավելագույն շաբաթական ժամերից երկու ժամ ավել: Ձեր ստացողը պետք է վարչաշրջանից հավանություն ստանա այս փոփոխության համար:

- Ավել արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան սովորաբար աշխատում եք.

Օրինակ. ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 45 ժամ աշխատանքային շաբաթում: Այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում ձեր ստացողին հարկավոր է, որ դուք աշխատեք 55 ժամ: Նա ասում է, որ նա կնվազեցնի ձեր աշխատանքային ժամերը 10 ժամով հաջորդ շաբաթ, որպեսզի դուք աշխատեք միայն 35 ժամ այդ շաբաթ:

Այս փոփոխության պատճառով դուք աշխատելու եք 15 արտաժամյա ժամ երկու շաբաթվա ժամանակահատվածում՝ 10 արտաժամյա ժամվա փոխարեն, որոնք սովորաբար կաշխատեիք: Քանի որ այս փոփոխությունը ստեղծում է լրացուցիչ հինգ արտաժամյա ժամ մեկ ամսում, ձեր ստացողը պետք է վարչաշրջանից հավանություն ստանա իր ժամերի այս փոփոխության համար:

- 66 ժամից ավել աշխատանքային շաբաթում:

Օրինակ. դուք աշխատում եք երկու ստացողների համար, Ստացող Ա, որն ունի առավելագույն շաբաթական 36 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, և Ստացող Բ, որն ունի առավելագույն շաբաթական 30 ժամ մեկ աշխատանքային շաբաթում: Այդ ամսվա մեկ շաբաթվա ընթացքում Ստացող Ա-ին հարկավոր է, որ դուք աշխատեք 37 ժամ: Քանի որ դա անելու պատճառով դուք կաշխատեք 67 ժամ այդ աշխատանքային շաբաթում՝ մեկ ժամ ավել, քան ձեր առավելագույն շաբաթական 66 ժամը, ապա դուք չեք կարող աշխատել այդ լրացուցիչ մեկ ժամը:

Եթե դուք աշխատում եք միասնաբար առավելագույն շաբաթական 66 ժամ աշխատանքային շաբաթում, և ձեր ստացողներից մեկը խնդրում է ձեզ լրացուցիչ ժամեր աշխատել իր համար, դուք կարող եք անել դա, միայն եթե կարող եք նվազեցնել մյուս ստացողների համար ձեր աշխատած ժամերը: Հակառակ դեպքում, դուք պետք է ասեք ստացողին, որ նա մեկ այլ IHSS մատակարարող գտնի այդ լրացուցիչ ժամերի համար:

Ձեր ժամանակացույցը ներկայացնելը

Երբ ձեր նոր աշխատանքային շաբաթվա ու ճամփորդության ժամանակի կանոններն ուժի մեջ կմտնեն **2016 թ. փետրվարի 1-ից**, դուք կզեկուցեք ձեր ստացողի համար ձեր աշխատած բոլոր ծառայության ժամերը ձեր ժամանակացույցի վրա, ինչպես անում եք դա այժմ:

Ինտո Դուք պետք է հանձնեք ձեր ժամանակացույցը (ձեր և ստացողի կողմից ստորագրված) յուրաքանչյուր վճարման ժամանակահատվածի ավարտից երկու շաբաթվա ընթացքում:

- Եթե դուք ժամանակին եք ներկայացնում ձեր ժամանակացույցը, ապա ձեր վճարումը ձեր աշխատած ժամերի համար կկատարվի 10 օրվա ընթացքում՝ ժամանակացույցների մշակման հիմնարկությունում դրա ստացման ամսաթվից հետո:
- Եթե դուք ժամանակին չեք ներկայացնում ձեր ժամանակացույցը, ապա հնարավոր է, որ դուք կվճարվեք ստացողի համար ձեր աշխատած ծառայության ժամերի համար մինչև 30 օրվա ընթացքում՝ ժամանակացույցների մշակման հիմնարկությունում դրա ստացման ամսաթվից հետո:

Ուղիղ ավանդ

Եթե ձեզ օգնություն է հարկավոր ձեր աշխատավարձն ավելի արագ ստանալու հարցում, խնդրում ենք զանգահարել 1 866 376 7066 հեռախոսահամարով Ուղիղ ավանդի մասին տեղեկությունների համար:

Ձեր ճամփորդության հայցի ձևը ներկայացնելը

Եթե դուք նույն օրը ճամփորդում եք տարբեր ստացողների միջև ծառայություններ տրամադրելու նպատակով, ապա դուք կզեկուցեք ձեր ճամփորդության ժամանակը ձեր ճամփորդության հայցի ձևում: Ծամփորդության հայցի ձևը պարունակում է ցուցումներ, թե ինչպես լրացնել այն և որտեղ ուղարկել ձևը մշակման համար:

IHSS Մատակարարողի անդամագրման պայմանագիր (SOC 846)

Չնայած, որ դուք ստորագրել եք SOC 846-ը, երբ նոր էիք դարձել IHSS մատակարարող, դուք պետք է կարդաք ու ստորագրեք կցված SOC 846 ձևը՝ ցույց տալու համար, որ հասկանում եք այս ծանուցման մեջ բացատրվող նոր աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումները: **Դուք պետք է վերադարձնեք ստորագրված SOC 846 ձևը վարչաշրջանին մինչև 2016 թ. ապրիլի 15-ը: Եթե չվերադարձնեք ստորագրած SOC 846 մինչև 2016 թ. ապրիլի 15-ը, ձեզ կհեռացնեն IHSS մատակարարողի աշխատանքից 2016 թ. մայիսի 1-ից:**

Վարչաշրջանը ձեզ կուղարկի ձեր ստորագրված SOC 846 ձևի պատճենը ձեր արձանագրությունների համար:

Խախտումներ աշխատաթափին շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումները գերազանցելու համար

Սկսած 2016 թ. մայիսի 1-ից՝ եթե դուք ժամանակացույց եք ներկայացնում՝ գեկուցելով աշխատանքային շաբաթվա կամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները գերազանցող ժամեր, դուք խախտում կստանաք, ինչպես նաև այն բողոքարկելու մասին ծանուցագիր: Ամեն անգամ հետևյալից որևէ մեկն անելիս, դուք խախտում կստանաք՝

- Դուք աշխատում եք 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար, երբ ձեր ստացողը վարչաշրջանից հավանություն չի ստացել (երբ այդ ստացողի համար հաստատվել է 40 ժամից քիչ մեկ աշխատանքային շաբաթում),
- Դուք աշխատում եք ավելի շատ ժամեր ձեր ստացողի համար, քան նրա հաստատված ժամերն աշխատանքային շաբաթում, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարում ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք,
- Դուք աշխատում եք մեկից ավելի ստացողների համար, ու դուք աշխատում եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, կամ
- Ձեր ճամփորդության համար հայցված ժամանակը գերազանցում յոթ ժամ մեկ աշխատանքային շաբաթում:

Ձեր ստացված յուրաքանչյուր խախտման համար լինելու են որոշակի հետևանքներ.

Առաջին խախտում	<ul style="list-style-type: none"> • Ձեր ստացող(ներ)ը և դուք կստանաք խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:
Երկրորդ խախտում	<ul style="list-style-type: none"> • Ձեր ստացող(ներ)ը և դուք կստանաք խախտման մասին ծանուցում, և դուք կարող եք անցնել մեկանգամյա ուսուցում աշխատանքային շաբաթվա ու ճամփորդության ժամանակի սահմանափակումների մասին: Եթե որոշում եք անցնել այս ուսուցումը, դուք չեք ստանա երկրորդ խախտումը: • Եթե որոշեք <u>չանցնել ուսուցումն</u> ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում, դուք կստանաք <u>երկրորդ խախտման մասին ծանուցում</u> և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:
Երրորդ խախտում	<ul style="list-style-type: none"> • Ձեր ստացող(ներ)ը և դուք կստանաք երրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ: • Դուք <u>կհեռացվեք</u> IHSS ծրագրի IHSS մատակարարողի աշխատանքից <u>երեք ամսով</u>:
Չորրորդ խախտում	<ul style="list-style-type: none"> • Ձեր ստացող(ներ)ը և դուք կստանաք չորրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ: • Դուք <u>կազատվեք</u> IHSS ծրագրի IHSS մատակարարողի աշխատանքից <u>մեկ տարով</u>:

Եթե մեկ ամսվա ընթացքում պատահում է մեկ խախտումից ավել, անկախ այն բանից, թե քանիսն են պատահում այդ ամսվա անհատական շաբաթների ընթացքում, դա կհաշվարկվի որպես միայն մեկ խախտում:

Ցանկացած տեսակի խախտում ստանալիս դուք ունեք տաս օրացուցային օր խախտման ծանուցման ամսաթվից, որպեսզի դիմեք վարչաշրջան ու խնդրեք վերանայել խախտումը: Երբ վարչաշրջանը ստանում է վերանայման խնդրանք, այն ունի տաս օրացուցային օր խախտումը վերանայելու և ձեզ վերանայման արդյունքների մասին ծանուցում ուղարկելու համար:

Երրորդ ու չորրորդ խախտումների համար, եթե վարչաշրջանը չի չեղարկում խախտումը, դուք կարող եք խախտման վերանայում խնդրել Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների բաժանմունքի Չափահասների ծրագրերի բաժնի Բողոքարկման միավորից: Վարչաշրջանի ծանուցումը կբացատրի՝ ինչպես կարող եք նահանգային վերանայում խնդրել:

Երբ դուք խախտում եք ստանում, այդ խախտումը մնում է ձեր արձանագրություններում: Սակայն, եթե մեկ տարուց հետո դուք այլ խախտումներ չեք ստանում, ապա ձեր ստացված խախտումների քանակը կնվազեցվի մեկով: Եթե դուք չեք ստանում լրացուցիչ խախտումներ, ապա ձեր վերջին խախտումից հետո յուրաքանչյուր տարի ձեր խախտումների քանակը կնվազեցվի մեկով:

Եթե դուք ստանաք չորրորդ խախտումը և ազատվեք մատակարարողի աշխատանքից մեկ տարով, ապա տարվա ավարտից հետո, երբ դուք կրկին դիմեք IHSS մատակարարող լինելու համար, ձեր խախտումների քանակը կգրոյացվի:

Եթե դուք ազատվում եք աշխատանքից չորրորդ խախտումը ստանալու համար, ապա մեկ տարվա ազատման ժամկետը լրանալուց հետո դուք պետք է կրկին լրացնեք մատակարարողի անդամագրման բոլոր պահանջները, նախքան կրկին կարող եք IHSS մատակարարող դառնալ, ներառյալ՝ կենսագրական տվյալների ստուգում, մատակարարողի կողմնորոշում ու այլ պահանջվող ձևերի լրացում:

Եթե դուք չեք հասկանում այս ծանուցման տեղեկությունները, կամ եթե հարցեր ունեք դրա վերաբերյալ, ապա զանգահարեք վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ վարչաշրջանի IHSS Յանրային իշխանություն: